

ԲԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար  
Տարեկան 12 Ձր.  
Վեցամսեայ 6 »

Արսասահմանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Աւերիկայի համար  
Տարեկան 3 Տրլ.  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Իսկուցման տողը առաջին երեսին համար 40 սակարկով է. իսկ վերջին երեսի համար 20 սակարկով է. երեքեկ անկի անգամներու համար 20 ՕԼՈ զեղջ կըլլայ:

Պոչկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

# ՇԱՌԹՈՒՄ

ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԵՂԵՍԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԻՆՍԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախկին և զբաղ զրկն  
Խմբագրութեանս հասցիին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չին տրուի

Արսասահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

ԽԱՒԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գրեց

ՎԱՀՍՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

«Նարժում»ի ներկայ թուով կը սկսինք հրատարակել այս վէպը, որ առնուած է գաղթական հայութեան կեանքէն:

ՅԱՐԳԱՆՔ  
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ  
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Օգոստոս 14ր անցաւ:

Արտասահմանի հայութիւնը, ոչ պաշտօնապէս և ոչ ալ անպաշտօն կերպով շարտայայտեց ոչ իր սուգը այդ արիւնտա թուականին մէջ հայութեան սուսած հազարաւոր զոհերուն, և ոչ ալ իր յարգանքը այդ օրը ինկած յեղափոխութեան նահատակներուն: Անցաւ այդ տարեգարձը, լուռ ու մունջ, անտարբեր ու ապերախտ մոռացութեան մը մէջ:

Ազգերու, ազատութեան ձգտող ժողովուրդներու կեանքին մէջ յաճախ կը պատահին սակայն այսպիսի յուսի շրջաններ:

«Նարժում»ի 245 և 246րդ թիւերով հրատարակեցինք համառօտ ուսումնասիրութիւն մը, պուրկար յեղափոխութեան մէկ գրքուակին վրայ, որ ծանօթ է «Ապարիլեան յեղափոխութիւն» անունով:

Ամէն անոնք, որ ուշագրութեամբ կարգացին այդ տողերը և քիչ շատ ծանօթ են նաեւ մեր յեղափոխական գէպքերուն և գէժքերուն, գտան անշուշտ շատ մը համանման կէտեր անոր և մեր «Ոգոստոսեան յեղափոխութեան» չէ թէ միայն գործին այլ և գործիչներուն մէջն ալ:

Երկուքն ալ ուղղուած միևնոյն բարբարոս կառավարութեան դէմ:

մէկը երկրին մէջ մեծ ծառայով, կազմակերպուած ապստամբութեան մը ձեռքին տակ, միւսը երկրէն դուրս, բռնակալութեան կեղծոնը, և թէեւ փոքր չափով, բայց իր յանկարծական ու յանդուգն ծրագրով, աւելի ահաւոր և աւելի դժգոյց:

Երկուքին ալ հերոս կազմակերպուներն ու առաջնորդներն, ազատութեան տաք ու ոգելից շունչովը գինով, կը նետուին յորձանքին մէջ ու կ'իյնան կռուի դաշտին վրայ: Եւ սակայն երկուքն ալ նոյն ձախող և ուղեւոր վախճանը կ'ունենան:

Փոխան սպասուած ազատութեան փառքուն արշալոյսին, կոտորած, թալան և բանտ կուգան ալ աւելի դառնացնել մարտիրոս ժողովուրդներու կ'աւանքը:

Եւ երեկի խանգաղաւ, արբշիւ ոգեւորութեան կը յաջորդէ ամբոխային այն տրամաբանութիւնը, որ ներկայի անտանելի կացութեան մէջ բանաձարութեան շիտակ ճամբան կորուսած, կայրէ ինչ որ պաշտած էր և ուրի տակ կառնէ ինչ որ երէկ մեծ յարգանքով ճակատին կը տանէր:

Պուրկար ժողովուրդը իր այս ցաւագար ու ապերախտ շրջանը բոլորած՝ ազատութեան ներկայ վայելքներուն մէջ հետզհետէ կը սրբագրէ իր սխալները, իր իր գործած անիրաւութիւնները հանդէպ իր նախամարտիկ զինուորներուն, մութին ու մոռացութեան մէջէն դուրս լոյս աշխարհ բերելով անոնց աղուոր ու անձնուրաց գէժքերը և իր քաղաքներն ու բլրակներն անոնց արձաններով, անոնց նուիրուած յիշատակարաններով ծածկելով:

Մեքնք ինչ կընենք, մեքնք որ ազատութեան նոյն այդ տեղիներովը տապկուած, այնքան պէտք ունինք այդպիսի պատերազմով, խորհով, անձնուէր ու անկեղծ ուժերու. կուտանք պէտք եղած յարգանքը մեր յեղափոխութեան նախամարտիկներուն:

Ընդհակառակն մեր ներկայ մոլորանքին մէջ ձեռքերնուս եկածը ըրինք չէ թէ յարգելու՝ այլ կարելի եղածին շափ նսեմացնելու անոնց յիշատակը:

Իրաւ է, դեռ ուղղակի չը համարձակեցանք այդ ինկող հերոսներուն անունը նախատելու, բայց նոյնը չէ՞ երբ գործողին տեղ գործողութիւնն է որ կը նախատենք շարունակ:

Թէ՛ ոչ մէկ յեղափոխութիւն մէկ թափով, մէկ փորձով յայտնուած է, թէ՛ ոչ մէկ ազգ առանց նախընթաց կոտորածներու և տագնապալից շրջաններու կրցած է իր վերջնական ազատութիւնը ձեռք բերել, ասի այնպիսի բացարձակ և կրկնուած ճշմարտութիւն մըն է որ աւելորդ է հոս հաստատել: Միթէ՞ ծայրայեղօրէն անիրաւ չենք ըլլար երբ կը պահանջենք, որ մեր նախամարտիկները անպատճառ յաջողին:

Չէ՞ մի որ անոնք ուղղակի գաղափարին նուիրուած տուին ինչ որ ունէին:

Վաղը երբ ունենանք մեր ազատ Հայաստանը, անշուշտ պիտի աճապարենք մեր ներկայ ապերախտ վերաբերութիւնը պարտրկել, պիտի տանք անոնց արժանաւոր յարգանքը:

Բայց այդ վաղը ձեռք բերելու համար գեռ ո՞րչափ անհրաժեշտ են մեզ յեղափոխական ուժեր, մարի, կամքի, սրտի հերոսներ, որ շարունակելով իրենց՝ նախորդներու ճամբան, վերջապէս պարտքած ու պարտասած ժողովուրդը հասցնեն այդ փափաքուած հանգրուանը:

Եւ ինչ բան արդեօք կրնայ անոնց թիւը աճեցնել, կամ զիրենք քաջալերել իրենց գոռաբերին գործին մէջ, եթէ ոչ ժողովուրդին հաւատքը իրենց վրայ, և ցուցըցած յարգանքը իրենց նախորդներուն:

Եթէ երբեք կը փափաքինք որ կարճ ըլլայ մեր ներկայ զարհուրելի մղձաւանջը և պակաս մեղաւոր գոնուինք ապագային առ-

ջեւ, պէտք չէ կուտակցական կիրքերու մէջ խզղենք իրական արժանիքները, պէտք չէ նենգամիտ, անորակելի և մութին մէջ գարանույ մարդոց շահերուն զոհենք մեր ազգային շահը:

Տա՛նք միշտ արժանաւոր յարգանք մեր ազատութեան նախամարտիկ նահատակներուն:

ՎԱՀՍՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 18 Օգոստոս

Պոլիս արտակարգ ոգեւորութեան մը մէջ է, Պոչտօնական ու մասնուոր շատ մը շէնքեր կը զարդարուին վաղուան . օտին համար: Ամէն կողմ ցցուած է Օսմանեան արիւնտա թուղրան իր ճիւղային ձեւով, կարծես կը նախին ինկած «լու» մը ըլլայ, որուն շարածճիւն մէկը վառած սիկար մը մօտեցուցեր ու տաքութիւնով ուռեցուցեր է, պայթելու, սատկեցնելու աստիճանին հասցուցեր է:

Պոլիս արտակարգ կենդանութեան մէջ է, բայց միայն պաշտօնական Պոլիսն է որ կը շարժի: Անգին հարիւր հազարներով թուրք, հայ ուրոյն ամբողջ անտարբեր կրաւորական գիրքով մը կարծես ոչինչով չի հետաքրքրուիր, ոչ մէկ մասնակցութեան նշան կը ցուցնէ: Ընդհակառակը ամէն մարդու դէմքը աւելի զգուշաւոր, աւելի կասկածոտ ու վախցած գիծեր են հագեր: Բառերն անգամ բերաններէն կը հանեն երկար մտածելով կասկածելով, չափելով, ձեւելով ու հազար անգամ չորս կողմերնին նայելով:

Մինչեւ վաղը կէս օր խստութիւնները պիտի աճին, ձերբակալութիւնները պիտի շատնան, բանտերը դեռ պիտի անքան իրենց մէջ: Հիւրասիրուած բազմութեան առատութենէն, իսկ վաղուրէն ետքը քիչիկ-քիչիկ պիտի թեթեւանան... շնորհիւ բարեգութ Սուլթանի. իսկ մինչ

այդ՝ կը տանջուինք, անվերջ կը տանջուինք. Այ ուտելինս գիտենք, ոչ խմելինս, ոչ պտոյտնիս, ոչ գործերնիս... Ամէն վայրկեան մտածում մը միայն հրէշի պէս կը ցըրուի աչքերնուս առաջ. ի՞նչպէս վարուի որ այս 19ի սեւ օրը անցնենք առանց ծակը իյնալու: Դուք արտասահման ապրող հայեր, դուք՝ չնչին, ամենաչնչին գաղափար մը անգամ չէք կրնար ունենալ մեր այս քանի մը շաբաթուան մէջ քաշած շղային հիւանդոտ վիճակի մասին: Դուք Պոլսէն փախած ազգասէր պարոններ, դուք ալ չէք կրնար ըմբռնել մեր վիճակը. աս տարուան Պոլսը ոչ 90ի, ոչ 95ի, ոչ 96—97—98ի Պոլսն է. այսօր կատարեալ գաղանանոց մըն է դարձեր փատիշահներուն քաղաքը...

Պոլսը մեռած է, Պոլսը կենդանացած է:

Մեռած է որովհետեւ գործ չիկայ, աշխատանք չիկայ, ստակ չիկայ: Այսօր ալ Մէսաժըրի «նիկէթ» նաեւն ելած հայ տղեկի մը ժանտախտէն մեռնիլը պատճառ է տուեր ուս կառավարութեան 10 օրուան քարանդինա նշանակել Պոլսէն գացող նաւերու համար. ու նաեւրը դադարած են Պաթում, Օսէսա երթալէ... գործերը կը մեռնին, կը հանգին թոյլ ճրագներու պէս: Ստակ չիկայ, շատ պատուաւոր ու հաստատուն վաճառականներ «թօփ կը նետեն», սնանկ կը հրատարակուին... Տուն տունի ետեւէ կիւնայ կը քանդուի:

Կենդանի է միայն կառավարական շրջանը, ան ալ կեղծ,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն (1)

ԽԱԿԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ա.

— Տէ՛, մէյմէկ հատ ալ խմենք Պ. վահրամ, այս գիշեր նորէն ախորժակս բաց է:

— Ենորհակալ եմ Տիգրան աղա, ժամը ինն է. թատրոնը կը սկսի հիմա. գիտես այս գիշեր ազգային ներկայացում կայ:

— Վազ անցիր դուն այ թատրոնէդ, չեմ գիտեր ի՞նչ կը հասկնաս մտիկ ընելով ուսուցիկ ապուշութիւններ, սնամէջ րացագանչութիւններ. ինչ որ են այդ քու ազգային կոչած ներկայացումներդ. Գոնէ գերասանները քիչ մը շնորհք ունենային. անոնք ալ իրենց անճարակ կապկուսութիւններովը մարդուս հոգին կը հանն:

— Ներողութիւն, պէտք է գիտնաս որ ես խաղին նիւթէն, կազմութենէն աւ գերասաններէն աւելի կը հետաքրքրուիմ հանդիսատեսու եղող հայութիւնով. որ անգիտակից եւ ինքնաբեր սրտազեղումով մը իր

արհեստական կենդանութիւն մըն է, 25ամեակն է ցնցողը:

Ինթելիգենտ բնու ճահի գեասանը իր մասնաւոր պատուիրակ 25ամեակին ներկայ գտնուելու: Երէ՛յ հասան և պուկար պատուիրակները, որոնց մէջն է և իշխանին պահակաօրաց պետ ժէնէրալ Նիքոլաէֆը... օ՛խ, դառն ծիծաղ... Երբեմն Մակեդոնական քովթէիին նախագահը... Հասան և գաղղիական, իտալական և ուսական պատուիրակները: Այսօր կը սպասուին գերման, սերպ և այլ ներկայացուցիչները: Եթէ Ձինու գործերն ալ խառնուած չըլլային, երեւի Թուան իշխանը ամենէն յարմար հրէշը պիտի ըլլար Համբար ձեռքը սեպուխ համար նշանակուած...:

Բայց, ընթերցող, չկայ վարդառանց փուշի: Օսմանեան աս «բաժակ մը շուրի փոթորկին» ալ իր փուշերն ունի: Աս ամէն պատուիրակներն ալ ծախքեր կուզեն, իսկ գանձարանը պարապ է. Համբար սրտէն ալ պարապ: Աս սարսուռն է Համբար իր անձնական գանձէն բաւական խոշոր գումար մը նորէն «մէյտան» բերել, ինչպէս ըրաւ 97ի յունական կուրի ատենը: Բայց ֆուսս մը չի կայ. Համբար իր տուածը տուածներով ետ կառնէ: Միայն Շիրքէթի-Խայրիէյի բնկերութեան կողմէ նուէր տրուած փոքրիկ ոսկիէ և թանկագին քարերով զարդարուած նաւը առնուազն 400 ոսկի կարծէ: Հայոց Պատրիարքի տուած նուէրը 200 ոսկիի է նստեր. Մեսրոպ դաւաճան եպիսկոպոսի ուղերձի ոսկիէ ադամանդազարդ տուփը

հոգեկան ներքին աշխարհը կը պարզէ հոն: Ճշմարիտը խօսելով բուն տրամբ անոնց ներկայացուցածն է, որ իմաստասիրի մը համար ամենայնուրեւ ժամանակն ու միջոցը կընծայէ մեր ցեղին ներկայ հոգեբանական երեւոյթներուն թափանցելու:

— Ինձի համար, որ քեզի պէս իմաստասիրող մը չեմ, հոգիի ներքին նրբութիւններէն և երեւոյթներէն աւելի արտաքին ձեւն ու մարմինն է հետաքրքիր և հաճելի. և փոխանակ քեզի պէս՝ ամբոխին արցունքը, ծիծաղը, հեծկտանքն ու վայնասունը տարբարուածիլու: աւելի լաւ կը սեպեմ հոս նստիլ. քանի մը գաւաթ գարեջուր աւելի խմել. անցնող դարձողները գիտել, և յետոյ հոս հոն անկիւնները թափառել մուսթին միջ աժամաղին ու համով որս մը գտնելու յուսով:

— Բայց այս գիշերուան համար կըրնաս յետաձգել սովորական քէֆդ ու որսորդութիւններդ. մասնաւոր որ ներկայացուելիք խաղը բոլորովին նորութիւն մըն է, ժամանակակից կեանքէ առնուած, և հեղինակը որ նոյնիսկ այս գիշեր գլխաւոր դերը պիտի կատարէ, շատ տաղանդաւոր տղայ մըն է, մեծ արուեստագետ մը ըլլալ կը խոստանայ. և արժանի է քաջալերութեան:

— Ի՞նչ է որ:

120 ոսկի կարծէ: Աս այսպէս անվերջ, անվերջ... միայն իմ գիտցած չնչին նուէրները 40—50,000 ոսկիի կը հասնին, իսկ իմ գիտցածս հազիւ ամբողջութեան աննշմար մէկ մասը ըլլայ: Աս նուէրները կըլլան, ու աս պատուիրակութիւնները կուզան որ ուրախակցին, որ շնորհաւորեն մէկու մը 25ամեակը, որ արդար տեսակետով մը դատած՝ իր այս 25ամեայ թագաւորութեան համար կախաղանի, անարգ կախաղանի միայն արժանի էր:

Ոմանք կըսեն թէ տօնը մէկ օր միայն պիտի տեսէ, ոմանք ալ կըսեն թէ երեք օր: Բայց աս ալ սուկցնեմ, որ արդէն շատ մը թուրքեր բանտարկուած են աս, լոկ աս մէկ թէ երեք օրի մասին խոսած ըլլալուն համար:

Համբար սրտին մօտ, խիստ մօտ ու թանկ է իր այս արիւնոտ յրեւելանը: Գիշեր ցորեկ խեղճը կը դողայ, որ չըլլայ թէ իր գլխուն «հարամ» ընեն իր տօնը, խաղ մը սարքեն հայերը: Ամէն թուրք շրջանակներ կը խօսին արդէն, թէ հայերը «բան» մը պիտի ընեն. ի՞նչ «բան» պիտի ընեն չեմ գիտեր և չեմ ալ հաստատ որ հայերը ատ շափ միտմիտ ըլլան «բան» մը ընեն, երբ շարքը քիթերնէս կախուած մեզի կըսպասէ:

Ինչպէս է՝ որ աս տեսակ Համբար համար հանդիսաւոր վայրկեանի մը օրերուն Սպաղանքի շարքի լուրը շատ ալ հաճոյալի չերեւցաւ, գէթ ճիշդ ժամանակին չէր:

— Վարդէս Գեղամեանը.  
— Հա՛, աս սղան որ ամէն բանի մէջ կը նետուի. չիտակը խօսելով զէրօի շափ արժէք չունի ինձի համար. չեմ գիտեր ինչո՞ւ առջի օրէն չը համակրեցայ այդ սղանը:

— Բայց քու համակրութիւնդ կամ հակակրութիւնդ ալ իր քով նշանակութիւն մը չունի. քանի որ ատով ոչ բան մը կաւելցնէ եւ ոչ ալ կը պակսեցնէ. ըսաւ Վահրամ բաւական զուգուած ոճով մը:

— Լա՛ւ, լա՛ւ. բարկանայլու ի՞նչ կայ. պատասխանեց Տիգրան միշտ պահելով իր պտղաբերութիւնը. ես սկսնակներէն չեմ ախորժիք վիսելամ: Գացէք դուք դիտարկեցէք, քաջալերեցէք զինքը, ու երբ օր մը ձեր հերոսը կը կատարելագործէք, մեծ արուեստագետ մը կը շինէք, ան ասան ինձի ալ լուր կուտաք, ու ես ալ կուզամ ներողութիւն խնդրելու և ձեզի հետ մէկտեղ ծափահարելու ու վարձատրելու:

— Այսինքն երբ ալ ոչ քու ծափերդ և ոչ ալ քաջալերութեանդ պէտքը կայ. ճիշդը խօսելով քու այդ տրամաբանութիւնդ կը նմանի մեր այն կարգ մը հարուստ և խելացի ազգասէրներու պատճառարանութեանը, որոնք կը խոստանան և պատրաստ են իրենց կարողութենէն, խելքէն մաս մը բան յատկացնել յեղափոխու-

Անգլիական դեասանը պահանջեր է միջազգային քովթիսիոն մը զրկել շարքի վայրը: Զինովիէֆն ալ նման պահանջ մը ըլլեր է, բայց երկուքին ալ պահանջները չէ ընդունուեր ու Համբար խոստացեք է անմիջապէս «անկաշառ» ու «արդարամիտ» պաշտօնեաներ զրկել քննելու և յանձնարները պատժելու: Եւ Օգոստոս 12ին Տրապիզոնի վրայով մեկնեցաւ ատ քննիչ յանձնախումբը, որուն անգամներն են ժէնէրալ տը պոլկատ էնվեր վաշան, արդարութեան պաշտօնեայ Մէհմէտ էֆէնտին և ատենագիր մը: Աս ատենք պիտի քննութիւն ընեն, մեղաւորները պիտի պատժեն... Երանի մեզ, գառներու համար պահապան կը զրկուին գայլերը...:

Եթէ անգլիական և ուսական դեասաններու միջազգային քովթիսիոն մը զրկելու առաջարկութիւնը չընդունուեցաւ, գէթ ատկէ ետքը Զինովիէֆի մէկալ պահանջը կատարուեցաւ: Զարի դեասանը պահանջեց որ Բաղէշի զինուորական հրամանատար Ալի փաշան հեռացուի այդ նահանգէն: Աս հեռացուցին... միայն Երզնկայ, նորէն հայաշատ տեղ մը, որ հոն աւելի աղէկ կոտորէ:

Տեղական թերթերը լուր մը հաղորդեցին, որ ինձի շատ ալ տարօրինակ երեւաց: Հայկական դաւաճաններէն մէկուն մէջ երկու զինուորներ ծախքեր են իրենց հրացանները և փամփուշտները: Որո՞ւ, չեմ գիտեր: Միայն զինուորական դատարանը ատ երկուքն ալ դատապարտեր է շական

թեան, պայմանաւ որ նախապէս ապահովուի Հայաստանի ազատութիւնը, և Հայկական ազատ պետութիւն մը հիմնուի. այսինքն երբ ալ ոչ յեղափոխութեան պէտք մնայ և կամ յեղափոխութիւնը անոնց դրամին ու խելքին պէտքը ունենայ:

— Ազատ ես ուզումիդ պէս ըմբռնելու և մեկնելու:

— Ուրեմն մնաւ բարով քու գարեջուրիդ և խաւարաջրիկ խուզարկութիւններուդ հետ:

— Դուն ալ երթաւս բարով քու սաղանդներուդ և ապագայ արուեստագետներուդ մօտ:

Անկէլ-Սլավօֆի նախասրահին մէջ եղած այս խօսակցութիւն վերջացաւ երկու բարեկամներու իրարմէ բաժնուելովը: Տիգրան աղա Ող ցեան հոն մնաց նստած, կատուի աչքերը պատուհանին անկած, մէկ ձեռքը փորին վրայ հանգչեցուցած, միւսովն ալ պիտեք ուղորդով, իսկ Վահրամ Լուսիկեան փողոց կըլլով արագ քայլերով ուղղուեցաւ գիմարը հանրային պարտէզը:

ՎԱՀԱՆ, ՄԱՆՈՒԷԼԵԱՆ  
(Շուտեմուկի)

տարուան տաժանակիր աշխատութեան Զինուորները կը ծախեն իրենց հրացանները, գէշ նշան թուրքի համար և մտք պահելու երեւոյթ հայերու համար:

Եւ ի՞նչ կրնան ընել խեղճ զինուորները, անօթի են, և ո՞՞րիկ չեն ստանար, յաճախ ուտելու ալ ոչինչ չեն գտնար. կողոպտուով կապրէին մինչև օրս, բայց այսօր ան ալ չիկայ, կողոպտուողը հայն է, անոր ալ քովը այլևս ոչինչ չմնաց: Իսկ առ ստամոքսի մաշոյ կարիքի առն չարածիները գեղին ոսկիներ կը ցուցնեն, «քուկը են ասոնք կըսեն, եթէ հրացանդ տառ», Անօթի է, հայ կուզէ: Հայրենիք, ազգ, պարտականութիւն, պատիւ անհասկանալի բառեր են թուրքին համար, պատիժը երկրիցն է միայն որ զայն կը կասեցնէ: Իսկ յաճախ ստամոքսի կարիքը աւելի զօրաւոր է քան այդ երկրիցը: Աշխատելու է այդ րոպէները գտնալ և հրացանը գնել:

Ընթերցող, նամակս լմնցուցի, բայց պիտի յաջողի՞մ այսօր փոստին հասցնել չեմ գիտեր: Ահա աս աստիճանի է հասեր խտուրթիւնը:

ԲԱԺ

Չամուկ Սուլթանին քով ջարդերէն խուսափած թշուառներուն կեանքը փրկելու համար, աս մարդը պատասխանեց բոլորովին անփոյթ՝ դէմքով մը. «Ահ, իսկապէ՞ս կը կարծէք որ այդքան մարդ սպաննած ըլլայ»: Է՛հ, այո՛, այդքան եւ աւելի մարդիկ սպաննուած էին: Պ. Հանօթօի կը բաւէր միայն անգամ մը կարողալ իր Պոլսոյ գեապանին սքանչելի տեղեկագիրը: Բայց զիւանագիտութիւնը եւ ոչ իսկ վայրկեան մը մտաքէն անցուցած էր պատասխանատուութիւնները որոշել եւ յանդաւորները պատժել:

Մամուլն ալ Սուլթանին նուազ նպաստաւոր չի խօսեցաւ: Խոշոր օրաթերթի իրեն ջատագով կանգնեցան: Ամէն լեզուով կարելի էր կարողալ Սուլթանին եւ իր ընթերցիչներուն անհրաժեշտը: Հայերը իրեն չարագործներ եւ արդարութեան արտաւերայներ կը ներկայացուէին: Փրօքի ժողովուրդը նոյնիսկ պատկեր մը հրատարակեց որ կը ներկայացնէր մզկիթ մը թալանելու վրայ եղող հայերու աւազակախումբ մը:

Մզկիթին փլատակներուն տակ, գիւղերէ փոսուած էին անշարժ, եւ անոնց փատտոցէն կը հակցուէր հայերէ սպաննուած թուրքեր ըլլալուն:

Այսպէս անաւեր պահանջայ արձանագրեց. ամենէն վիթխարի շարագործութիւնը զոր երբեք մարդկային յիշողութիւնը կարողացած է պահել, օրինաւոր արդարութեան գործ մը նկատուեցաւ: Ու Արեւելքի ազատութեան համար մարտնչող այս ափ մը քայլերու ճակատին աւազակ նշանակիչ մակդիրը դրոշմեցին:

Զինու գէպերն ալ նոյնքան զարհուրելի են: Բոլոր զգայուն մարդոց հետ, մենք եւս կը սարսառանք խորհելով որ հազարաւոր մարդկային էակներ աւարկու տանջանքներու մէջ իրենց շունչը փչած են, զո՞հ երթալով չինական գազանութեանց: Մենք այս շարագործութեանց սարսափը այնքան աւելի անհորոշ կը զգանք, որքան գիտենք թէ մենէ իւրաքանչիւրը իր ընտանիքին մէջ նմանօրինակ արիւնարբու ոճիրներու զոհեր կը պարունակէ: Որովհետեւ մարդկային վայրագութիւնը ամէն տեղ նոյն է, եւ ամէն ժողովուրդէ աւելի մենք փորձով գիտենք թէ ի՞նչ տառապանքներ կը պատճառէ եւ որքան արցունքներ կը խլէ անիկայ մարդէն:

Բայց եւրոպա միշտ նոյն կարծիքը չունեցաւ: Անկարհեր քան մը նկատեց Արեւելքի մէջ Սուլթանին հրամանով ինկած 300,000 զինուոր: Պոլսէն հասնող անձկութեան ու վրշտի անհուն աղաղակին առջեւ խուլ ու անտարբեր մաց: Ինք թողուց որ մեր դարուն մէջ ջարդերու թուականը բացուի, այսօրուան Զինաստանի մէջ կատարուածը տեղի կուրենայ այն դէպքերէն ետքը զորս ինք թուրքերով մէջ քաջայրեց:

Չի կարծուի որ մենք այս տեսակէտով Զինաստանցիներուն ներողամիտ աչքով կը նայինք: Թէեւ այսօր հաստատուած է թէ ամէն բան ըրին խեղճերը զայրացնելու համար, այսօր հանգերձ մենք իրենց գործը գազանային ոճիր մը կը նկատենք: Եթէ պատերազմները աս հասարակ բարբառս եղեոնագործութիւններ են, խաղաղ եւ անվնաս մարդոց կոտորածը այն տեսակ շարագործութիւն մըն է, որ կը մտնուանք արդարութեան ու զթութեան մեր բոլոր զգացումները: Ու Բէքիթի մէջ ջարդուած եւրոպացիները այնքան անվնաս մարդիկ էին, որքան Պոլսոյ փողոցներուն մէջ ջարդուած հայերը:

Գինները այնքան անվնաս մարդիկ էին, որքան Պոլսոյ փողոցներուն մէջ ջարդուած հայերը:

Ոչ, չենք արդարացներ Զինները իրենց գործած բարբարոսութեանց համար, որքան ալ միսիօնարներէն եւ օտար կառավարութեանց գրգռուած ըլլան. այլ մենք պարզապէս կուրենք յիշեցնել այն զուգակիցը որ կայ Պոլսոյ ջարդերուն ատենուան Պաշտօնական եւրոպային եւ այսօրուան Բէքիթի ջարդերուն Պաշտօնական եւրոպայի միջեւ:

Ամբողջ եւրոպայի մէջ միաձայն աղաղակ մը Զիններուն պատժուիլը կը պահանջէ: Ազգամուտները աւելի հեռու կանցնին. վրիժառութիւն կը պահանջեն, իբր թէ ներքի ըլլար կազմակերպեալ հասարակութեանց օրինաւորապէս հնազանդիլ վրիժառութեան զգացումին: Ի՞նչ փոյթ, խանգը ընդհանուր է, գէթ պաշտօնական շրջանակներու մէջ, Հայերու եւ Մակեդոնացեաց ջարդերը ծափահարող օրաթերթերը, մեծազորոզ աղաղակներով մեծ պետութիւններէն կը պահանջեն բոլոր Զինացիներու ամբողջական ընաջնջումը:

Արիւնոտչա խմբերը կատարեալ է. ձայնաշարին բոլոր խաղերը կը նշմարուին հոն: Արդէն զօրագունդերը ճամբայ կ'սած են, որոնք պիտի ձեռնկուին այս նուազանի ձայնով:

Մասնաւորապէս հետաքրքրական է զիսկ թէ որքան փոփոխութիւն կը կրեն Կերմանիոյ կայսեր մարդասիրական զգացումները: Նկատելով որ խնդիրը Զինաստանի՞ կը վերաբերի թէ Արեւելքի: Բազմապատժու մը անհրաժեշտ կը դառնայ յոս իր հերուան եւ այսօրուան գործերուն մէջ: Քանի մը շարաթ առաջ, իր գեապանին սպաննումէն ետքը, Զին մեկնող զօրքերուն քարոզ խօսած ատեն, Աստուածային շնորքով ներշնչուած իր միապետի կերպարանքով ըստ թէ, երկինք անողոր պատիժ մը կը պահանջեն, զի Կերմանացի մը ըսպաննուած է, Յուլիս 28ին: Պրէմէրալէնի մէջ, Զին մեկնող զօրաց առաջին վաշտը անցնելէ ետքը, Կիլիսիոյ Բ. որ երբեք ճառ մը խօսելու անիթը չի փախցնէր, գինուորներուն ըստ, «Եթէ Զինաստանցիներուն մօտենաք, բնաւ մի խնայէք, երբեք ողջ գերի մի բռնէք»: Իբրեւ գազանութիւն, աւելի նշանակալից խօսք չէր կարելի արտասանել: Այդքան Կերմանացիներու մահը վայրկեան մը իսկ հանցիտ չէ ձգած ազնիւ միապետը:

Սակայն թոյլտուութիւն պիտի ընէ՞ մեզ իրեն հարցնելու թէ, արդեօք հանգիստ կը ննջէ՞ր երբ Արեւելքի մէջ հայերը կը կոտորէին: Այս 300 000 զոհերու հոլովունը կը խտովէին իր հանգստութիւնը:

1896ին, այս շարաշուք պարոնը քաջայրեց սուլթանը, որպէս զի խաղաղ շարունակէ իր գործը: Անոր խորհուրդ տուաւ կրէտէի մէջ ալ գործել, ինչպէս գործած էր Հայաստանի մէջ: Ու, երբ այս բոլոր ոճիրները կատարուեցան, իր հիացումը գէպի Ապտիւլ-Համիտ ցոյց տալու համար, Պոլիս եկաւ, ջերմագին զիրկընդխառնուեցաւ անոր հետ, եւ ստիպեց իր կիներ որ բազուկը տայ այն անձին՝ զոր կ'ատարատն ոճրագործ անուանած էր: Պատկեցաւ այն պալատին մէջ, ուրկէ մեկնած էին ջարդերու հրամանները, պատուանշաններ բաշխեց այն վատերուն որոնք այդ հրամանները գործադրած էին: Ու իր ուխտադրժութիւնը աւելի չեցողով ըլլալու համար, արիւնալի նախապիք մը

արձակեց ամբողջ քրիստոնէութեան երեսին, եւ գնաց Բրիտանոյ գերեզմանը այցելելու այնքան քրիստոնեաներու արիւնը մանող մարդասպանին յազուկներուն մէջ գրկուելէ ետքը:

Այս ողորմելի հապիտը՝ սրածայր պերեւելչուներով, որ հիմա Զիններուն դէմ լարուած է, պիտի ըսէ՞ մեզի որ մը, թէ Հայոց դահիճներու հսկողութեան տակ երբեք մէջ ննջած պահուէն, զոհերուն ստուերները կը յաճախէին արդեօք իր վեհապետի երազանքը: Պիտի ըսէ՞ մեզի արդեօք, թէ զոհ անմոտանալի այդ խողիտղու մեկերուն յիշատակը, գերեզմանական տեսիլքներով չէ՞ր խողվէր իր երեւակայութիւնը:

Բայց, եթէ ինք կը լռէ, լաւ է որ ուրիշներ զայն յիշեցնեն, Լաւ է որ մարդիկ գիտնան թէ, այս տխուր արարածը քաջայրեց Սուլթանը իր գործած ոճիրներուն մէջ, եւ յետոյ զայնս նուիրագործեց իր հեղինակութեամբ: Լաւ է նաեւ յիշել թէ, Քիստի-Չուրի առումը, զոր ինք հրամայած էր հակառակ ամէն իրաւունքի, լիցոց բաժակը որ այսօր Զինաստանի մէջ կը յորդի, եւ թէ մեծագոյն յանձաւորը ինքն է խորոյսպէս, քանի որ հայոց սպանման պատճառ դարձաւ, ինչպէս հիմայ եւրոպացեաց:

Հիմա իրեն հաճելի կերեւայ քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան աստիճանի գեր ստանձնել: Այս վեհապետը որ այնքան ձեւեր առաւ, չէր կրնար ուրիշ նոր մը անել աւելի ցածօրէն:

Եթէ եւրոպայի մէջ հասարակաց կարծիք մը կայ, պէտք է զգացնէ իրեն որ, Ապտիւլ-Համիտի յայտնած հրացանով ջարդերու թուականը նուիրագործելէ ետքը, իրեն չի վայելի ընկճուածներու պաշտպանի եւ փրկիչի դեր առնել: Անշահ հապիտութիւնը, նոյն իսկ գահին վրայ, իր ներքի անվայելչութեան անմաններէն անդին չպէտք է անցնի: Բայց զժբախտութիւնը հոն է որ եւրոպայի մէջ հասարակաց կարծիք չի կայ, եւ թէ այս խօսքերը՝ որոնք արդարութեան վրէժառու բողոքներն են, մարդկութեան մեծագոյն ժաս մը կառավարող վախկոտ ու անպէտ արարածներու դէմ ուղղուած, երբեք չեն ըսուած:

Հասարակաց կարծիքը կատարողութիւն կ'սրգ մը սրիկաներուն շոյիքէն որոնք կը հետեւին պատեւներով ու ոսկիներով շողջողուն ճամբան: Եթէ Զինացիները հասարակաց կարծիքին ուղղութիւն տուող մամուլը գնելու երջանակ ներշնչուին ունենային, ոչ նուազ գովասանքներ պիտի տեղար այսօր իրենց մասին: Քանի որ մամուլը ծարու առարկայ մը դարձած է, ոչ մէկ պատճառ կայ որ Զինացիներն ալ ուրիշներու պէս չի գնեն զայն:

Ապտիւլ-Համիտ որ շատ նրբամիտ մէկն է, ինչպէս կերեւայ, մամուլը մոտենալու յանցանքը չի գործեց: Ընդհակառակը, իր անձնական ծախքերուն ցուցակին մէջ, պատուաւոր տեղ մը արձանագրուած է ան, լըրտեսներու եւ դահիճներու քովիկը: Ամէն տեղ, երբ կարելիութիւն կայ, խնամիները իրար կը գտնան: Մամուլը կերեւայ թէ այս դրացնութեանէն զժգո՞ չէ, ու կը շարունակէ կրցածին չափ լաւ Սուլթանը գովել:

Այնքան հայեր, կրիտացիներ, մակեդոնացիներ սպաննելէ ետքը, Ապտիւլ-Համիտ մամուլի մեղոցաւ մեծահոգի հոշակուեցաւ, Գերմանիոյ կայսեր այցելութեան արժանացաւ,

ԹՈՒՐԿԵՐԸ ԵՒ ՊՕՔՍԷՐՆԵՐԸ (\*)

Cri de Paris թերթը հիւանալի պատկեր մը տպած է, ուր Ապտիւլ-Համիտ Զինաց կայսեր հետ կը խօսակցի:

— Փոքրիկ մեծխօսիկ, կրէս աւնոր, ես Հայաստանի մէջ քու Պօքսէրներէդ շատ լաւ գործ տեսայ:

Արդարեւ, Ապտիւլ-Համիտ Հայաստանի մէջ շատ աւելի ազատ գործ տեսած էր քան թէ Պօքսէրները: Առանց ո՞ն եւ թաքուն խորհրդա, որութեան, բոլոր հիւպատոսներու աչքին առջեւ, ամէն տեղ կազմակերպած էր հայերու կոտորածը, եւ գործադրած միեւնոյն համարձակութեամբ առանց իր վրայ ո՞ն եւ է պատասխանատուութիւն հրահրելու: Դեպքանները, Պոլսոյ մէջ, իրենց աչքերով տեսած էին մասնաւորապէս գաւառներէն բերուած քիւրտերը եւ քաղաքացիի հազուատով ձայտեայ սպաները, որոնք օր ցերեկով թուրքաւոր ըրին Հայերը սասնկանութեան հսկողութեան տակ, Անոնք իրենց աչքերով տեսած էին Բերաի սալայատակներուն վրայէն, խողիտղուած մարմիններով, զոհերու արիւնաշաղախ դիակներով լի սայլերուն անցնիլը: Ամբողջ հինգ օր Պոլսոյ մէջ հայերը սպաննեցին, ինչպէս ոչխարը կը մորթեն սպանդանոցին մէջ:

Ոչ մէկ գտածով իր կրեցին այս անաւոր շարագործութիւնները: Պաշտօնական եւրոպայն եւ ոչ իսկ յուզուեցաւ: Հայկական պատուիրակութիւն մը ներկայացած ըլլալով Պ. Հանօթօյի, որպէս զի անոր բացատրէ իր հայրենակիցներուն դժոխային կացութիւնը, եւ խնդրէ անկից մի-

(\*) Մակեդոնական Յեղափոխական հանդէս էֆօնէն թարգմանուած:

